40 Կա երկիր՝ պանծալի և փայլուն,

1. Կա երկիր՝ պանծալի և փայլուն,
Եվ կրնանք հավատքով զայն տեսնել,
Հոն Աստված պալատներ շողշողուն
Խոստացավ մեզ համար պատրաստել:

Ո՜հ, սիրուն ապագա,
Ե՞րբ պիտի միանանք պերճ եզերք:

2. Բարերար և Սուրբ Հորն երկնային
Կընծայենք գոհության պարգևներն,
Զի շնորհեց Իր Որդին Միածին,
Մեծ հույսով ալ կօրհնե մեր օրերն:

3. Պիտ երգենք քաղցրաձայն երգ Գառին,
Երբ հասնինք այն եզերքն գեղեցիկ,
Սրտերնիս ալ պիտի չտրտմին,
Երբ կազմենք խումբ սրբոց երջանիկ:

4. Պիտ հանգչինք այն եզերքն փառավոր
Եվ պսակ անթառամ ժառանգենք,
Զերծ մեղքեն, երջանիկ և անդորր,
Հավիտյան մեր Փրկիչն ալ գովենք: